



Հայաստանի  
ՔՀԿ-ների  
Հակակոռուպցիոն  
կոալիցիա



## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ՝ 2020-2022ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի (այսուհետ՝ Հայտեր) ուսումնասիրության և ս.թ. հունիսի 11-ին ՀՀ Արդարադատության նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) տեղի ունեցած հանրային քննարկումների արդյունքում ներկայացնում ենք Հայտերի վերաբերյալ հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները:

### Ռազմավարական պլանավորում և ծրագրավորում

1. Նախարարության ներկայացրած Հայտերը չեն բխում Կառավարության քաղաքականության ընդհանուր նպատակներից և թիրախներից, մասնավորապես՝ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված Կառավարության ծրագրից: **Օրինակ 1**, Նախարարության կողմից ներկայացված Հայտերի «Նպատակները և թիրախները ՄԺԾԾ ժամանակահատվածում» բաժնում հղում է տրվել Վարչապետի որոշմամբ հաստատված Նախարարության կանոնադրությանը, մինչդեռ անհրաժեշտ էր հղում տալ Ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրին, մասնավորապես՝ 3-րդ «ՊԱՅՔԱՐ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ» բաժնին և 4.1-րդ «ՕՐԵՆՔԻ ԱՌՋԵՎ ԲՈԼՈՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ» բաժնին: **Օրինակ 2**, քրեակատարողական ոլորտի բարեփոխումների ռազմավարական ուղղությունները սահմանելիս պետք է հղում տրվեր Կառավարության ծրագրի 4-րդ բաժնին, որտեղ վերջինս նախատեսում է, «...որ արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատագրված ավանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանը»: Այս ռազմավարական մտքի իրագործման միջոց է դիտարկվում հաջորդ պարբերությամբ արձանագրված գործողությունները՝ «...ազատագրված այլընտրանք հանդիսացող պատիժների և կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների նախատեսման, դրանց գործնական կիրառման համար անհրաժեշտ միջոցների ապահովման ուղղությամբ, ինչպես նաև քաջալերի նման միջոցների կիրառումը»: **Օրինակ 3**, որպես ռազմավարական ուղղություն՝ վերականգնողական արդարադատության անցումը նույնացվել է քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) իրականացվող վերասոցիալականացման ծրագրերի արդյունավետության բարձրացման հետ: Ռազմավարությունը որոշելիս անդրադարձ չի կատարվել, որ չափելի կերպով պիտի նվազեն ՔԿՀ պահվող անձանց, նրանց վերահսկող անձանակազմի և ՔԿՀ քանակը: Սույն ռազմավարական նպատակը նախատեսված չէ ՄԺԾԾ ժամանակահատվածում: **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.1:** Առաջարկում ենք Նախարարության ռազմավարական նպատակները և թիրախները սահմանելիս առաջնորդվել
  - Կառավարության ծրագրով<sup>1</sup> և Կառավարության 2019թ. մայիսի 16-ի N650-Լ որոշմամբ հաստատված Կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրով: Հիշյալ որոշման N 1 հավելվածով հաստատվել է նաև ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող

<sup>1</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf>



միջոցառումների ցանկը (այսուհետ՝ Ցանկ), որով Նախարարությունը պետք է իրականացնի թվով 27 միջոցառում սահմանված ժամանակահատվածում<sup>2</sup>:

- Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի հոդված 1-ի (e) նպատակով, հոդված 12-ով<sup>3</sup> և ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ, որի հավելվածի ճանապարհային քարտեզի «Արդարադատություն, ազատություն և անվտանգություն» վերտառությամբ Մաս 3-ով՝ Նախարարությունը պետք է իրականացնի որոշակի միջոցառումներ<sup>4</sup>:

## Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ

2. Հայտերի ծրագրերում սահմանված միջոցառումների համար նախատեսված չեն արդյունքային (քանակական և որակական) ցուցանիշներ, որոնք պետք է բխեն և համապատասխանեն ծրագրերում սահմանված թիրախներին և նպատակներին: **Օրինակ 1**, Հայտերի 1057 ծրագրի Հավելված 3-ի Մաս 3-ում չեն սահմանվել ծրագրի վերջնական արդյունքները՝ հիմնական չափորոշիչները և թիրախային ցուցանիշները, ինչը հակասում է ծրագրային բյուջետավորման սկզբունքներին և Ցուցումների պահանջներին: **Օրինակ 2**, Հայտերի 1093 ծրագրում նպատակ է սահմանվել «իրավունքի պաշտպանության հասանելիության և օբյեկտիվության ապահովում»-ը: Նպատակին հասնելու համար նախատեսված են թվով 3 միջոցառումներ, որոնք չեն համապատասխանում նպատակի բովանդակությանը: Սակայն Հայտերում վերջնական արդյունքի չափորոշիչ է ընտրվել՝ «Հանրային պաշտպանի ծառայությունների վերաբերյալ շահառուների գոհունակության գնահատական (1-4 բալային համակարգում)»-ը: Փաստացի, տվյալ ծրագրի արդյունքում՝ հանրային պաշտպանի ծառայությունների հասցեականության կոմպոնենտն է միայն իրագործվում, մինչդեռ դատական գործընթացներին աջակցության ապահովման ուղղությամբ արդյունքային ցուցանիշ ներկայացված չէ: Ինչպես նաև, հիշյալ ծրագրի Հավելված 3-ի Մաս 4-ում՝ 11001 դասիչի միջոցառման «Արդյունքի չափորոշիչներ» դաշտում բացակայում են 2018թ. փաստացի ցուցանիշները: **Օրինակ 3**, 1093 ծրագրում սնանկության գործերով կառավարչական ծառայությունների ձեռքբերման մասով ոչ ֆինանսական ցուցանիշներ առկա չեն, միջոցառումը միայն պահպանման ծախսեր է սահմանում և անհասկանալի է այս միջոցառման արդյունքը: **Օրինակ 4**, Հայտերում 1093 ծրագրի «Փորձաքննությունների ծառայությունների տրամադրում» միջոցառումը Նախարարության կողմից իրականացվում է իր ենթակայության ոլորտում գործող «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ պայմանագիր կնքելու միջոցով, մինչդեռ Հավելված 3-ի Մաս 4-ում գրված է, որ միջոցառումն իրականացնողը մրցույթի արդյունքում ընտրված կազմակերպությունն է<sup>5</sup>:

**Օրինակ 5**, Հայտերի Հավելված 3-ի Մաս 4-ում 1149 ծրագրի 11003 միջոցառման մեջ և 1120 ծրագրի 11002 միջոցառման մեջ բացակայում են 2018թ. արդյունքի չափորոշիչները: Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման

<sup>2</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝

[https://www.gov.am/files/docs/3347.pdf?fbclid=IwAR2jWpsn5Qxi5pOBQNOQh2i0TwCBijS7C9NMEG38\\_fbA5AADHXixEDDY-cY](https://www.gov.am/files/docs/3347.pdf?fbclid=IwAR2jWpsn5Qxi5pOBQNOQh2i0TwCBijS7C9NMEG38_fbA5AADHXixEDDY-cY)

<sup>3</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.mfa.am/filemanager/eu/cepa.pdf> :

<sup>4</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/varch/2019/19\\_666\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2019/19_666_1.pdf) :

<sup>5</sup> Անհրաժեշտ է հստակեցնել մոտեցումը. փորձաքննությունների ծառայությունների մատուցման տրամադրումը ամբողջ ծավալով իրականացնելու է Նախարարության ենթակայությամբ գործող մե՞կ ՊՈԱԿ, թե՞ մրցութային կարգով է լինելու: Պետք է հաշվի առնել, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի գործունեությունը բնույթով նույնն է: Արդյո՞ք կան փորձաքննությունների հատուկ տեսակներ, որոնք տրամադրվում են միայն մեկ մարմնի կողմից, ո՞ր ՊՈԱԿ-ն է իրականացնում փորձաքննությունները՝ տարանջատելով պարզ, միջին, բարդ աստիճանի փորձաքննությունները, և արդյո՞ք ունի համապատասխան մասնագիտական կոմպետենցիայով փորձագետներ: Ակնհայտ է, որ այս հանգամանքներն են որոշում փորձագիտական եզրակացությունների որակը, ինչպես նաև ներկայացված ծախսային միջոցների անհրաժեշտությունը և արդարացիությունը:



պատասխանատուների վերապատրաստումը հստակ չէ: Անհրաժեշտ է հիմնավորել, թե որ մարմիններն են ընգրկվելու այդ ցանկում և արդյոք այդ մարմինների ներկայացվածությունը հանգեցնելու է ռազմավարական թիրախներին և սահմանված արդյունքային ցուցանիշներին: **Օրինակ 6**, 1120 ծրագրի «նպատակներ և թիրախներ» բաժնում նշված է. «Նախատեսվում է մշակել քրեակատարողական համակարգի բարելավմանն ուղղված ռազմավարություն, որը կապահովի քրեակատարողական ոլորտի կանխատեսելի զարգացումն ու կատարելագործումը»: 2020-2022թթ. ընթացքում, երբ իրագործվում և իրագործվելու են ժամկետային ծախսերը, Նախարարությունը զբաղված է լինելու ռազմավարության մշակմամբ, որի արդյունքում, կարող է պարզվել, որ նախկինում արված ծախսերը եղել են ոչ ռազմավարական, անարդյունավետ ու ծախսվել են աննպատակ: Ռազմավարության մշակման թիրախները ընտրելիս հաշվի չեն առնվել հաշմանդամություն ունեցողների և այլ խոցելի խմբերի ներառումը: **Օրինակ 7**, Հայտերում վերասոցիալականացման բնույթի ծրագրերը/միջոցառումները նույնացվել են վերականգնողական արդարադատության իրականացման հետ, ինչն անթույլատրելի է: **Օրինակ 8**, 1120 ծրագրով նախատեսված է չափորոշիչ՝ «Կալանավորվածների և դատապարտյալների անձնական և մշակութային, կրթական ու հոգևոր զարգացման պատշաճ պայմանների ապահովում, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կազմակերպում»: 2019թ. համար ելակետային ցուցանիշ է 75%-ը, թիրախ ցուցանիշ՝ 80%-ը՝ 2020թ-ի համար: Անհասկանալի է ինչպես նման ելակետային տվյալների ճշգրտությունը, այնպես էլ՝ հնարավոր հավակնությունները: Մասնավորապես, ինչպե՞ս է գնահատվելու տոկոսային հարաբերությունը, երբ նույն անձը ներգրավված լինի թե՛ հոգեբանական հետազոտական աշխատանքներում, թե՛ մարզական ու այլ միջոցառումներում, թե՛ աշխատանքային զբաղվածության մեջ: **Օրինակ 9**, Հաշվի առնելով, որ կալանավորված անձինք անմեղության կանխավարկածի ուժով ունեն իրավունքների ու պարտականությունների առանձնահատկություններ՝ անհասկանալի է, թե 35% հասանելիությունն ինչպե՞ս և ո՞ր թիրախային խմբով պետք է ապահովվի (կալանավորվածի և/կամ դատապարտյալների): **Օրինակ 10**, 1120 ծրագրով «Դատապարտյալ և կալանավորված անձանց կարճաժամկետ մեկնումների տրամադրման, արձակուրդների թիվը» արդյունքի չափորոշիչում նշված է ընդամենը 250 հոգու համար: Այն կազմում է պլանավորված ընդհանուր ազատազրկվածների թվի 8,3%-ը: Անհրաժեշտ է ճշգրտել 250 թվի, այդ թվաքանակում կալանավորվածների ու դատապարտյալների տեսակարար կշիռների հարաբերակցության հիմնավորումը, ինչպես նաև տարեկան ընդամենը 250 ազատազրկվածի նկատմամբ կարճաժամկետ մեկնումների կիրառման պլանավորումը՝ արտաքին աշխարհի հետ կապի պահպանման իրավունքի գերակայություն ընտրելու պայմաններում:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.1:** Հանրային պաշտպանի գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) հաշվետվություններից օգտվելով՝ հաշվարկել, թե Գրասենյակի մեկ աշխատակիցը ամսական միջինը քանի վարույթ ընդունած գործ է ունենում, մեկ գործի քննության միջինացված տևողությունը: Համադրելով այդ տվյալները՝ պարզել փաստացի քանի հաստիք է անհրաժեշտ ավելացնել (կամ պակասեցնել), որպեսզի հանրային պաշտպանի կողմից արդյունավետ կերպով անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրվի: Տվյալ առաջարկությունը ներառելու դեպքում հաստիքների քանակը որոշելիս հաշվի առնել Գրասենյակից գործերի հնարավոր բեռնաթափման հանգամանքը առաջարկություն 2.2-ի հիման վրա, ինչպես նաև պաշտպանների հաստիքների տեղաբաշխումը մարզերում:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.2:** Հիմք ընդունելով, որ «Նախարարության հիմնական նպատակը ՄԺԾԾ ժամանակահատվածում շարունակելու է մնալ օրենսդրական դաշտի կատարելագործումը...» հանրային պաշտպանի ոլորտային օրենսդրական փոփոխությունների



կատարումը ներառել Հայտերում՝ որպես արդյունքային որակական ցուցանիշ՝ հստակեցնելով մեղադրյալի անվճարունակ լինելը հավաստող հիմքերը և չափանիշները<sup>6</sup>:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.3:** Հայտերում մանրամասնել և հիմնավորել, թե ինչ չափորոշիչների հիման վրա է ներդրվելու շահառուների գոհունակության գնահատման համակարգը: Առաջարկում ենք ստեղծել Գրասենյակի էլեկտրոնային կայք՝ «Հանրային պաշտպանի ծառայությունների գոհունակության գնահատական» գործիքը դարձնելու թափանցիկ և մատչելի, կայքում ստեղծել յուրաքանչյուր պաշտպանի գործունեության վերաբերյալ անհատական պատմություն՝ տալով հնարավորություն գնահատելու նրա աճը, մասնագիտական արհեստավարժությունը և այլն: Յուրաքանչյուր գործի ավարտին շահառուին առաջարկել գնահատել հանրային պաշտպանի գործունեությունը էլեկտրոնային եղանակով:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.4:** Առաջարկում ենք 1093 ծրագրում, որի նպատակն է իրավունքի պաշտպանության հասանելիության ապահովումը, որպես միջոցառում ներառել սնանկության կառավարիչների գործունեության հաշվետվողականության, թափանցիկության բարձրացումը, ինչպես նաև սնանկության ոլորտային իրավական կարգավորումներ իրականացնելը<sup>7</sup>:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.5:** 1123 ծրագրի շրջանակում՝ որպես արդյունքային ցուցանիշ ներառել ARLIS.am տեղեկատվական համակարգի փնտրման գործիք(ներ)ի զարգացումը: Ավելի համակարգված և արդյունավետ դարձնել փնտրումը՝ դասակարգելով փաստաթղթերը ըստ ընդունման տարիների, ընդունող մարմինների, իրավական ակտի տեսակի և այլ անհրաժեշտ չափանիշների, որոնցով կհեշտացվի փնտրման գործընթացը:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.6:** 1123 ծրագրի շրջանակում հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների վերաբերյալ անհրաժեշտ է հստակեցնել, թե պետական վկայականները քանի հատ են տպագրվում, և ինչքա՞ն է կազմում մեկ վկայականի ծախսը՝ հղում կատարելով նաև սահմանային ծախսին (այսինքն ցույց տալ ոչ միայն միջին ծախսը այլ նաև հաջորդ լրացուցիչ միավորի ավելանալու կամ պակասելու հետ կապված փոփոխվող ծախսերը): Առաջարկում ենք տեղեկատվական նյութերի տպագրությունը և բաշխումը ՀՀ տարածքով իրականացնել՝ շեշտադրում կատարելով գյուղական և քաղաքային համայնքների բնակիչների իրավագիտակցության մակարդակի բարձրացման վրա՝ համագործակցելով մարզերի իրավական ուղղվածություն ունեցող ՀԿ-ների հետ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.7:** Հիմք ընդունելով Ցանկի 53.4 միջոցառումը՝ առաջարկում ենք 1120 ծրագրի շրջանակներում նախատեսել նաև ֆինանսական միջոցներ «Պրոբացիայի ծառայության և այլ իրավապահ մարմինների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի» ստեղծման համար, քանի որ Հայտերում նման ծախսերը բացակայում են:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.8:** Առաջարկում ենք օրենսդրական փոփոխությունների արդյունքում<sup>8</sup> խրախուսել և զարկ տալ պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման, կարճաժամկետ մեկնումների տրամադրման, մեկուսացվածության առավել մեղմ աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ տեղափոխելու և բաց ուղղիչ հիմնարկի փոխափոխությանն ու ինստիտուտների (կիրառման հնարավորությունների ընդլայնում, ժամկետների

<sup>6</sup> Հիմնավորում. հայտնի է, որ քրեական գործերով անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հետ կապված վարույթն իրականացնող մարմինը հիմք է ընդունում ոչ միայն մեղադրյալի անվճարունակ լինելու հանգամանքը, այլ նաև գործի շրջանակներում արդար դատաքննության սկզբունքը: Արդյունքում, վճարունակ անձին նույնպես կարող է նշանակվել հանրային պաշտպան, իսկ Գրասենյակը չունի լծակ մերժելու քննիչի որոշումները:

<sup>7</sup> Մասնավորապես, դիտարկել Նախարարության՝ որպես վերահսկող մարմնի կողմից սնանկության կառավարիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորության ամրագրման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով Նախարարության որդեգրած ռազմավարական հիմնական թիրախները:

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ Քրեակատարողական օրենսիք, թիվ 1543-Ն Կառավարության որոշում, ՀՀ արդարադատության նախարարի թիվ 279-Ն Հրամանով սահմանված Կարգ:



երկարաձգում, կիրառման մեխանիզմների հստակեցում ու հաշվետվողականություն)՝:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.9:** «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ Օրենքի փոփոխության արդյունքում լուծել Քրեակատարողական վարչության պետի նշանակման հարցը՝ սահմանելով այն Արդարադատության նախարարի լիազորություններում՝ բացառելով ՀՀ նախագահի կամ ՀՀ վարչապետի կողմից նշանակման իրավակարգավորումը:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.10:** «Աբովյան» ՔԿՀ լավագույնս կարող է ծառայել 3 տեղամասերով (կանայք, մնչն 21 տարեկան երիտասարդներ և անչափահասներ) որպես հասարակություն վերադարձի նախապատրաստման ռեսուրս կենտրոն: Անհրաժեշտ է բոլոր անչափահասներին և մինչև 21 տարեկան երիտասարդներին, անկախ նրանց վարքից, պահել հենց այս հիմնարկում: Ավելին, բոլոր ՔԿՀ-ից մինչև 25 տարեկան պատժից ազատման նախապատրաստվող դատապարտյալներին պատժից ազատմանը նախապատրաստել հենց այս հիմնարկում: Առաջարկում ենք բարելավել Հայտերը՝ հիքմ ընդունելով «Աբովյան» ՔԿՀ-ի նման կառուցվածքային բաժանումները, ինչպես նաև վերանայել «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ գործունեությունը:<sup>10</sup>

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.11:** Առաջարկում ենք ամրագրել քրեակատարողական և պրոբացիոն ծառայությունների համահավասար, «հորիզոնական» գործընկերության փոխկապակցությունը՝ ԵԽ 2010/1 «Պրոբացիոն կանոնների», 2003/22 «Պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ առաջարկությունների» և այլ գերակա փաստաթղթերի տրամաբանությամբ (պենիտենցիար փուլում դատապարտյալի ուղղման անհատական պլանը կազմելիս, վաղաժամկետ ազատման համար դատարանին տրամադրվող զեկույցը նախապատրաստելիս և այլն):

### Ֆինանսական գնահատականներ և ծախսային արդյունավետություն

3. Հայտերում նախատեսված է իրականացվելիք ծախսերի առավել գերակա ուղղությունները, որոնք ներկայացված չեն կոնկրետ միջոցառումների տեսքով, մասնավորապես առկա են ծրագրեր, որոնց շրջանակներում իրականացվելիք միջոցառումներն ամբողջությամբ պահպանման ծախսեր են իրենցից ենթադրում:

Ծրագրերով սահմանված նպատակներին և իրականացվելիք միջոցառումներին համապատասխան՝ անհրաժեշտ է ֆինանսական ծախսերը նախատեսել հստակ, հիմնավորված, ճշգրիտ հաշվարկներով և հնարավորինս իրական կանխատեսումներով:

**Օրինակ 1,** Հայտերի Հավելված 3-ի Մաս 3-ում 1057 ծրագրի 11002 միջոցառման համար 2020-2022 թվականների ընթացքում ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել կամ այդ միջոցառումը չի իրականացվելու: Եթե չի իրականացվելու, ապա ինչու է նման միջոցառում նախատեսվել:

**Օրինակ 2,** Հայտերում 1093 ծրագրով նախատեսված է, որ փորձագետն ամսական աշխատելով միջինը 168 ժամ (21 աշխատանքային օր) ապահովում է ընդամենը 94,080 դրամի հասույթ: Մեկ ժամի արժեքի (560 դրամ) մեջ հաշվարկվել են պահպանման ծախսերը ևս, այսինքն՝ հաշվարկման եղանակը պետք է վերանայել:

**Օրինակ 3,** «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի գործունեության համար ծախսերը ներառված են հայեցողական ծախսեր դաշտում, մինչդեռ հիմնադրամի նույն գործառույթները ամրագրված են Կառավարության կողմից Նախարարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում ևս: Ուստի նպատակահարմար չէ երկու տարբեր պետական մարմինների տրամադրել ֆինանսական

<sup>9</sup> Տե՛ս «Անչափահաս ազատազրկվածների կրթությունը և մասնագիտական ուսուցումը. Հետազոտություն», ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, «Սոցիալական արդարություն» ՀԿ, Երևան, 2012թ, էջ 52-59  
<https://www.osce.org/hy/yerevan/87149?download=true>

<sup>10</sup> Այս երկու հիմնարկներում աշխատակիցների թվաքանակը կրկնակի և ավելի անգամ գերազանցում է ազատազրկվածների թվաքանակը, սակայն հիմնարկների վերականգնողական բնույթն իրացված համարելը հարցականի տակ է:





միջոցներ՝ իրականացնելու միանման միջոցառումներ, որոնք ուղղված են մինևսայն վերջնական արդյունքների ձեռքբերմանը (իրագործմանը): **Օրինակ 4**, Հայտերի Հավելված 3-ի Մաս 4-ում 1149 ծրագրի արդյունքի չափորոշիչներում սահմանված չէ «Մեկ ունկնդրի վերապատրաստման կամ հատուկ ուսուցման միջին ծախսը», ինչպես նաև նույն ծրագրի 11002 դասիչով 2018թ. փաստացի ցուցանիշները բացակայում են: Մինչդեռ, սրանք կարևոր և անհրաժեշտ չափանիշներ են՝ տարբեր միջոցառումների գծով նախատեսված ծախսի արդյունավետությունը պարզելու համար: **Օրինակ 5**, անհասկանալի է՝ ինչու ոլորտային ծախսեր բաժնում մասնանշված աղյուսակի տվյալներով<sup>11</sup> 2020թ. համար 1 մլրդ-ից ավելի աճ է սահմանված, երբ որևէ փաստաթղթում չկա որևէ հիմնավորում ՔԿՀ քանակի փոփոխության, աշխատակիցների ու ազատագրկվածների քանակների փոփոխության վերաբերյալ: Հասկանալի է, որ ՔԿ համակարգը գործելու է այնպես, ինչպես գործել է մինչ այժմ: Առնվազն պահպանվելու են 12 ՔԿՀ, մոտ 2,400 հոգուց բաղկացած անձնակազմը, որից մոտ 900-ը՝ արտաքին պահպանության ծառայությունում, սակայն նախկինում տարեկան միջինը մոտ 4,500-5,000 ազատագրկվածների փոխարեն, նախատեսվում է 3,000 ազատագրկված: Այս իմաստով, չկա նույնիսկ որևէ գնահատում, թե ինչ հիմքով պետք է թիվը լինի միջինը մոտ 3,000 ազատագրկված ու նրանցից քանիսը պիտի լինեն կալանավորված, քանիսը՝ դատապարտյալ (առնվազն՝ հագուստի, միջոցառումների մասնակցության, աշխատանքով ապահովելու և այլ իրավունքների ապահովման հարցում այս երկու կարգավիճակների տարբերությունը ենթադրում է նաև ողողակի ու անուղողակի ծախսերի տարբերություններ):

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.1:** Առաջարկում ենք հաշվարկել, թե ինչքան է կազմում մեկ փորձագետի վարձատրությունը՝ հիմք ընդունելով աշխատանքի վրա ծախսված ժամանակը, ամսական փորձաքննությունների քանակը, փորձաքննության բարդության աստիճանը և այլն: Ըստ այդմ պարզել մեկ փորձագետի միջին վարձատրության չափը և «փորձագետ» հաստիքի համար Հայտերում ներառել ֆինանսական հիմնավորված ցուցանիշներ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.2:** Հիմք ընդունելով առաջարկություն 2.1-ը՝ կատարել ֆինանսական իրական կանխատեսումներ՝ վերլուծական մասը և հիմնավորումները ներառելով Հայտերում:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.3:** Հանրային պաշտպանի մասով ֆինանսական ցուցանիշները սահմանելիս հաշվարկել մարզերում 1 հանրային պաշտպանի համար պահպանման ծախսերը:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.4:** 1123 ծրագրի 11002 միջոցառման մասով Հայտերում ներառել մեկ էջի թարգմանության միջին արժեքը և՝ մասնագիտացված կազմակերպության, և՝ «ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ և «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ կազմակերպությունների կողմից կատարվելու դեպքում<sup>12</sup>:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.5:** 1120 ծրագրի շրջանակներում առաջարկում ենք ներկայացնել, թե պրոբացիայի տակ գտնվող մեկ շահառուն ինչքան է արժենում պետության վրա՝ ներառելով 2018թ. փաստացի արդյունքների վերլուծությունը ևս:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.6:** Առաջարկում ենք, որ Կառավարության զգալի միջոցները ուղղվեն ազատագրկում չենթադրող պատիժների ու միջոցների խրախուսմանն ու կիրառմանը (օրենսդրական կարգավորումներից մինչև գործանական մակարդակ)՝ հասկանալիորեն նվազեցնելով ազատագրկման ձևով պատիժների համար միջոցների ծախսը՝ նախատեսելով ավելի արդյունավետ ու ծանրակշիռ ծախսեր հենց պրոբացիայի ոլորտում:

<sup>11</sup> 2019թ սպասվող (հազ. դրամ) – 10250367, 2020թ բյուջե (հազ. դրամ) - 11218102.9, 2021թ բյուջե (հազ. դրամ) - 10525863.8, 2022թ բյուջե (հազ. դրամ) - 10543501.8 :

<sup>12</sup> Հիմնավորում. հաշվարկելով, թե արդյոք մրցութային կարգով մասնագիտացված կազմակերպության կողմից թարգմանչական և հրատարակչական ծառայությունների ձեռքբերումը ավելի քիչ ծախսատար է պետության համար, քան «ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կողմից մատուցված ծառայությունները, կպարզենք այս երկու մարմինների գործունեության նպատակահարմարությունը:



**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.7:** Թվով 12 ՔԿՀ ունենալը հիմնավոր չէ մեր երկրի համար, եթե հաշվի առնենք, որ տարեկան մեկ ազատագրվածի հաշվով ծախսը հիմնականում ՔԿ ծառայողի աշխատավարձն է, ՔԿՀ պահպանման ծախսերը, վերջում՝ սնունդը, կոմունալ ծառայությունների վճարը, հագուստը, անկողինը և այլն: Հետազոտությունների<sup>13</sup> համաձայն մոտ 1,800 հոգու պատճառաբանող չի գերազանցել 5 տարին, իսկ 2017թ-ին՝ ընդհանուր 2,410 դատապարտյալներից 1-5 տարի պատճառաբանող են դատապարտվել 1,284 անձ և կալանքի 181 անձ (մոտ 61%): Ոչ բոլորը, բայց նրանցից մեծ մասը կարող են/էին լինել Պրոբացիայի պետական ծառայության շահառու՝ խստագույնս նվազեցնելով ՔԿՀ թվաքանակը և ապահովելով առնվազն 3,572,100,000 (մլրդ) ՀՀ դրամի տնտեսում:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.8:** Արդյունավետ կառավարման դեպքում ՔԿՀ և համակարգն ամբողջությամբ, կարող են ոչ միայն ապահովել ծախսային լուրջ խնայողություններ, այլև, հնարավորինս, անցնել ինքնաֆինանսավորման՝ զարկ տալով ՔԿՀ ամենատարբեր արտադրություններին ու նյութական արժեքներ ստեղծելու համար դատապարտյալների իրավունքների իրացմանը: Հետևաբար առաջարկում ենք կազմել և հայտերում ներառել ծախսային ծրագրեր, որոնք սկիզբ կդնեն վերոնշյալի իրագործմանը:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.9:** «Ծախսային գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում» բաժնում ծախսերի առավել գերակա 4-5 ուղղությունների շարքին են դասվել (աղյուսակում) «Դատապարտյալների վերահսկողություն՝ քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների կացության ապահովում» ծախսային ուղղությունը՝ «ազատությունից զրկված անձանց...արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդման, պահման պայմանների բարելավման նպատակով» հիմնավորմամբ: Արտաքին աշխարհի հետ կապի համար ՄԿԱՅՊ կապը փորձարկվել և ՔԿՀ-ում այն կիրառելու մասին կառավարության որոշումը նախագծվել է 2017թ.-ին և ուժի մեջ մտել 2018թ. նոյեմբերին: Այսինքն, այն արդեն գրեթե կատարված կարելի է համարել: Ուստի առաջարկում ենք Հայտերում չներառել ծախսեր, որոնց ուղղությամբ արդեն ձեռնարկվել են գործողություններ:

### Ընդհանուր դիտարկումներ:

- ✓ Առաջարկությունների հիման վրա Հայտերը լրամշակելիս նաև ձևակերպել ծախսային գերակայությունները՝ համապատասխան փոփոխությունների:
- ✓ Ներկայացված Հայտերի՝ բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափի Հավելված N 3-ի Մաս 2-ում հստակ շարադրված չէ ծրագրի նպատակը և այն նույնացվում է ծրագրի վերնագրի հետ:

<sup>13</sup> Տե՛ս «Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և պրոբացիայի ծախսային և սոցիալական արդյունավետությունը», ԵԽ, «Սոցիալական արդարություն ՀԿ», Երևան, 2014թ., էջ 16: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://rm.coe.int/09000016800ccb5e>